ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

*ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԷՔՃԵԱՆԻՆ*
*ԳԵՐՄԱՆԻՈՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ*
*ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ*
*ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ*

*ՔԷՕԼՆ*

Կամօքն Աստուծոյ Ամենակալին Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցին բազում դարերից ի վեր օգնական է, մխիթարիչը եւ դաստիարակը Հայ հաւատացեալ ժողովրդի որ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի։

Վերջին տասնամեակներին, ինչպէս Մայր Հայրենիքում, այնպէս էլ արտասահմանում, մեր եկեղեցու զաւակները, տեղաշարժների հետեւանքով, նոր բնակութիւն հաստատեցին աշխարհագրական տարբեր շրջաններում, ուր մեր եկեղեցին սկսեց կազմակերպել նոր եկեղեցական համայնքներ եւ թեմեր։

Ահա նման պայմաններում, ասպնջական Գերմանիոյ մէջ եւս, հետզհետէ աճեց թիւը Հայ ազգաբնակչութեան, եւ կազմուեցին բազմաթիւ եկեղեցական համայնքներ, հոգեւոր հովանու եւ խնամքի ներքեւ Կեդրոնական Եւրոպիոյ Հայրապետական բարեջան պատուիրակին։

Այս օրերին սակայն արդէն անհրաժեշտութիւն է դարձել Գերմանիոյ Հայ համայնքները կազմակերպել իբրեւ ինքնուրոյն առանձին եկեղեցական թեմ։ Մայր Աթոռիս Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը, մեր նախագահութեամբ ներքոյ, հաստատելով այս իրողութիւնը եւ ընդառաջելով Գերմանիոյ Հայ համայնքների Վարչութեանց ներկայացուցիչների 25 Դեկտեմբերի 1991-ին Քէօլնում տեղի ունեցած ժողովի դիմումին, մենք այսու մեր Հայրապետական Կոնդակով հռչակում ենք կազմաւորումը Գերմանիոյ Հայոց եկեղեցական ինքնուրոյն թեմի, կեդրոն ունենալով Քէօլն քաղաքը եւ նշանակում ենք Հոգեշնորհ Տ. Գարեգին Վարդապետ Պէքճեանին որպէս Թեմակալ Առաջնորդ, կանոնական բոլոր իրաւասութիւններով, մաղթելով նրան լիակատար յաջողութիւն իր հոգեւոր առաքելութեան ճանապարհին։

Յանձնարարում ենք Տ. Գարեգին Հայր Սուրբին, որ անյապաղ կազմի թեմական խորհուրդ եւ թեմական կանոնադրութիւն, Գերմանիոյ Հայ Առաքելական եկեղեցու Թեմին, Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կանոնական վերին իշխանութեան ներքոյ։

Այս ուրախ առիթով յղում ենք մեր Հայրապետական բարի մաղթանքները եւ օրհնութիւնը նորահաստատ թեմի Առաջնորդ Տ. Գարեգին Վարդապետին, Գերմանիոյ եկեղեցական Հայ համայնքների վարչութեանց յարգարժան անդամներին, Հայկական եկեղեցական համայնքներին, եւ Մշակութային ու Բարեսիրական Միութիւններին եւ համայն մեր հաւատացեալ զաւակներին։

Սոյն մեր կոնդակով մեր խորին երախտագիտութիւնն ենք յայտնում Գերմանիոյ Մեր քոյր եկեղեցիներին եւ Պետական ու Քաղաքային իշխանութեանց իրենց յոյժ բարեացակամ վերաբերմունքի եւ եղբայրական բարոյական ու նիւթական օժանդակութիւնների համար Հայ եկեղեցական համայնքներին։

Թող բարին Աստուած Քրիստոսասէր Գերմանիոյ տարածքի վրայ անսասան եւ ծաղկեալ պահպանէ Գերմանիոյ Հայոց Թեմը իր եկեղեցիներով ու բարեպաշտ ժողովրդով։

***«ԱՅՆՊԷՍ ԼՈՒՍԱՒՈՐԵՍՑԷ ԼՈՅՍ ՁԵՐ ԱՌԱՋԻ ՄԱՐԴԿԱՆ, ՈՐՊԷՍ ՋԻ ՏԵՍՑԵՆ ԶԳՈՐԾՍ ՁԵՐ ԲԱՐԻՍ, ԵՒ ՓԱՌԱՒՈՐԵՍՑԵՆ ԶՀԱՅՐ ՁԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆՍ Է» ԱՄԷՆ (ՄԱՏԹ. Ե. 24)***։

*ՎԱԶԳԷՆ Ա.*
*ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ*

**Տուաւ կոնդակս ի 31 Յունուարի**
**1992 Փրկչական ամի,**
**եւ ի տումարիս Հայոց ՌՆԽԱ**
**ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի։**
**Հմր. 1852**

digitised by A.R.A.R.@